

բավէպները «Առաջին բնակութիւնն» և «Երբ հայրը լամպա գը-նեց»:

«Առաջին բնակութիւն»-ով՝ Ահօ կը պատկերացնէ այն ան-շըշուկ, անձնուրաց, տաժանազին ջանքերը, որ Ֆինլանդիայի գաւակները գործ են դրած չէնցնելու համար իրենց հայրենի-քը, բեղմնաւորելու համար անոր խոպան հողերը: Եթէ այսօր Ֆինլանդիան բաղաքակիրթ, կուլտուրական, բարգաւաճ երկիր մը դարձած է, այդ՝ «Առաջին բնակութեան» հերոսներուն շնորհիւ է:

«Երբ հայրը լամպա գնեց»-ը շատ աւելի գեղեցիկ է քան առաջին պատմուածքը: Ահօ՝ այս վերջին գործին մէջ երևան կը գայ դիտողի և ստեղծողի խորունկ կարողութիւններով: Թարգմանութիւնը սահուն է:

### ԶԱՒԵՆ

Խաչատուր Բարայեամ՝ «Վաղաժամ մասի», ողբերգութիւն 5 աբարուածով.  
Թիֆլիս, 1904 թ., գինն է 1 ըստիլ:

Ինչպէս կը ցուցինք աս «ողբերգութիւնը» պ. Բարայեան մէ միայն տիպեր, գրութիւններ, հոգեկան ընդհարումներ ստեղծելու գաղտնիքը չգիտէ, այլև չգիտէ մինչև անզամ այն հասարակ, տարրական բանը, թէ իւրաքանչիւր տեսարանի՝ գործողութեան բեմը փոխել կարելի է, բայց այդ գայթակղեցուցիչ տպիտութիւնը չէ արդելած զինքը թատերախասողեր գրելու:

«Վաղաժամ մահը» բացարձակապէս զուրկ է թէ արտաքին և թէ ներքին ամենաշնչին արժմանաւորութենէ: Պ. Բարայեանի ողբերգութիւնը կը նմանի մուրացելի մը տոպրակին, ուր խառնիխուռն և շտապով լեցուած են ամեն տեսակ ուտելիքներ: Պ. Բարայեան այդ պարկին մէջ լեցուցեր է իր բոլոր գիտցածն ու չգիտցածը: «Վաղաժամ մահը» անբնական, արհեստական խօսակցութիւններու, ուռուցիկ, զահլէ տանող ճառըրու, իմաստակ, երեխայական դատողութիւններու շեղակոյտ մըն է, որու հսկայական անմտութեան առաջ մարդ չգիտէ, զարմանամյ թէ զայրանայ: Տեսէք:

Առաջին արարուած. ա. տեսարան. Քաղաք. Առանձնաւ-սենեակ. Տիգրանը՝ ողբերգութեան (?) հերոսը և ընկերը՝ Լեռնա՝ գլուխը նոր են աւարտեր: Վկայագիրները՝ ձեռքներին կ'ուխտեն օրինակելի անձնաւորութիւններ» ըլլալ: Ու երդում կ'ընեն զրչի վրայ:

Տիգրան. Նզովկած է նա, ով չի կատարի այս ուխտն ու երդումը:

**Հետևն. Ամէն (!!!)** (Տիգրանը հանելով իր ժամացոյցը՝ տալիս է Հետնին, իբրև յիշատակ անմոռացովմէին, որի փոխարէն ստանում է նրանից մի մատանի, : Երկուքը միասին դուրս կ'ելլեն:

**Բ. տեսարան.** Տան մի սենեակում: Տիգրանի ծնողը՝ Յովհաննէսն ու Մարիամը ներս կը մտնեն. իրարու հետ քանի մը խօսք կը փոխանակեն ու կը շտապեն Տիգրանի մօտ, որովհետեւ նրա յոգնատանջ ուղեղին հարկաւոր է զուարձութիւն»:

**Գ. տեսարան.** Առանձնասենեակ: Ներս կը մտնէ Տիգրանը. «... ոհ, աշխարհ, անհասկանալի՛ աշխարհ. այսքան ապրեցայ և ուսում ստացայ, — տարիներ անցրի, բայց քեզնից մի գլուխ չըհանեցի... Ո՞հ, սիրոս ճնշում է տխուր մոտածմունքներից... սիրոտ խիստ կապ ունի երեակայութեան հետ. մեր ուղեղի այսպէս կամ այնպէս մտածելուց մեր սրտի տրամադրութիւնն էլ փոխում է... Աշակերտական վերջին տարիներում ես կատարեալ բանաստեղծ էի...» Եւ այդ պատճառով ալ կ'երևակայէ եղեր որ իր փառքի դրօշակը բոլոր բանաստեղծներու «դրօշակներից պէտք է բարձր ծածանվի»: «Ահա այսքան մեծ է բանաստեղծական հանճարի դերը, որի համար էլ նրան էի ձգտում և ձգտում եմ այժմ ողջ էութիւնովս»: Այս ճառին վրայ ներս կը մտնեն Յովհաննէսն և Մարիամը, և յանկարծ կ'առաջարկեն որ Տիգրանն ամուսնանայ: Տիգրան քիչ նազ կ'ընէ ու կ'ընդունի, «եթէ միայն փոքր ի շատէ բաւարարութիւն կը տայ (նշանածը) իմ պահանջներին»... Մայրը աղջիկ մը կը ճանչնայ արդէն, Սաթենիկ՝ էհ քանի որ տղան համաձայնութիւն տուաւ նոյն վայրկեանին բեմը թողելով կ'երթան Սաթենիկի տեսութեան:

**Դ. տեսարան.** Տան զահլիճում: Այս անգամ Սաթենիկինց տանն ենք: Սաթենիկի ծնողը արդէն կը սպասեն նշանտես եկողներուն: Կը մտնին հերերը: Բարկ՛, Աստուծոյ բարին: Ծանօթացում: Սաթենիկի ծնողին Տիգրանը «դրեկան տղայ է երևում»: իսկ այս վերջինի ծնողին վրայ ալ Սաթենիկը «շատ լաւ տպաւորութիւն է թողնում»:

— Սիրելիդ իմ Տիգրան, յայտնիր կարծիքութէ ի՞նչ կայ սրտումդ, ձայն կուտայ Յովհաննէսը:

— Սիրելի հայրիկ, չնայելով որ ճիշտ է, թէ մարդ ճանաչելու համար դեռ պէտք է սպասել, սակայն այդ ասված է այնպիսիների համար, որոնք հոգեկան նուրբ հոտառութիւն չունեն (?): Այնինչ իմ ծանօթութիւնը հոգերանական գիտութեան հետ և դրանից ու կեանքի մինչև այժմ ունեցած շատ ու

քիչ փորձառութիւնից ստացած հոգեգիտութիւնս շտապեցնում  
են ինձ իմ ձեռնարկութեան մէջ (!):

Սա ողբերգութիւն չէ կատարեալ զաւէշտ: Բայց շարու-  
նակենք: Մէջ կը մտնին մայրն ու հայրը ու կը յայտնեն որ-  
ամեն կերպով Սաթենիկը յարմար կը դատին Տիգրանի համար:  
Տեսնենք օրիորդն ալ համաձայն է: Սարգիս՝ Սաթենիկի հայ-  
րը՝ իր կարգին կը միջամտէ:

Սարգիս.—Ի՞նչ կ'ասես, որդիս:

Սաթենիկ. —Համաձայն եմ:

Յովհաննէս.—Ուրեմն շտապենք պատրաստութիւն տես-  
նելու նշանադրութեան համար:

Տիգրան. —Ո՞չ մի պատրաստութիւն հարկաւոր չէ. բա-  
ւական է այս մատանին: (Հանում է մատից և տալիս օրիոր-  
դին):

Մարիամ. Այդքան շտապել...

Տիգրան. Սէրը սահման չի ճանաչում:

Ուրեմն հերոսը իր հոգեկան նուրբ հոտառութեամբ ոչ  
միայն համած է Սաթենիկին, այլև անոր սէրը հինգ բոպէի  
մէջ արդէն սահման չի ճանաչում: Լաւ, այդպէս ալ թող ըլ-  
լայ: Հիմա նշանադրութենէն յետոյ ի՞նչ կը մնայ. հարսանիքը:  
Ու Մարիամն ու Յովհաննէսը վայրկեան մը աւելի չեն կենար—  
արդէն բոլոր գործողները հրդեհէ փախչողներու պէս կը շտա-  
պեն ամբողջ թատերախաղի ժամանակ—կ'երթան հարսանիքի  
պատրաստութիւն տեսնելու:

Յովհաննէս. ... Ուրեմն ամեն ինչ վերջացած է նշանա-  
դրութեան կողմից (?). այժմ գնանք և պատրաստուենք հարսանի-  
քի համար: Մնանք բարով, ազնիւ ինսամիներս:

Մարգիս. —Գնաք բարով, թանկագին բարեկամներս:  
Շտապելու ոչինչ չկայ. երբ ուզում էք, այն ժամանակ անենք  
հարսանիքը:

Յովհաննէս.—Շատ լաւ: (Յովհաննէսը, Մարիամը եւ  
Տիգրանը դուրս են գնում):

Մարգիս. —Այժմ մնում է մեղ խոնարհուել նախախնա-  
մութեան վճռի առաջ և տեսնել մեր շուտափոյթ ձեռնարկու-  
թեան արդինքը:

Պրծմաւ: Ահաւասիկ ձեզի ա. արարուածը: Եթէ առաջին  
գործողութիւնն ալ այսպէս տեսարան առ տեսարան վերլուծե-  
ցի, շօշափելի կերպով ցոյց տալու համար էր մեր ընթեցող-  
ներուն պ. Բաբայեանի. ոչ միայն յդացումի խեղճուկրակու-  
թիւնը, այլ և ոճի ու մտածումի այլանդակութիւնը: Պէտք է  
պիտնալ սակայն, որ միւս արարուածները նոյնքան և գուցէ.

աւելի պակասաւոր են: Ամենմէկ տեսարանէ յետոյ գործողութեան տեղը փոխելը անփոփոխելի օրէնք մըն է պ. Բաբայեանի համար: Երկրորդ արարուածին հերոսը մեծ որոշում մը կու տայ իբրև ուսուցիչ գնալ գիւղ: Անշուշտ լաւ կ'ըլլար, որ բաղաքի մէջ պաշտօն ունենար, բայց անճարը կ'ուտէ բանջարը: Սակայն հերոսը բանջար ուսող անճարը չէ: Եթէ ան գիւղ կ'երթայ այն նկատումով է որ «բանն ուր կը հասնի, եթէ ամենքըն էլ քաղաքում լինեն: Պէտք է մի ըիշ էլ զաղափարականութիւն:»

Երրորդ արարուածից հերոսը գիւղի ուսուցիչ է արդէն: Սենեակին մէջ աշուղի մը պէս կ'երգէ իր հայրենիքը կարօւը դուրս առաջ համար: —«Արդէն ծածկվեց հայրենիքս—Հորիզոնի յետևում, —Ռոտեղ թողի սիրելիքս—Մտածմունքի խոր ծովում: —Նրան որին պատահել է—Հայրենիքից բաժանուել, —Ցայտնի է թէ որքան ծանր է—Սուրբ վայրերից անջատվել: —Դառն է ժամը, երբ պիտ, թողնես—Օրօրանը պապերիդ, —Ռուպէս նաև այդ վայրկեանը,—Երբ էլ չկայ սիրելիդ:»

Ինչպէս կը տեսնէք կատարեալ պլազուր: Բայց գիւղի մէջ ուսուցիչը չի սիրուիր: Թէ ինչմէւ, չգիտենք: Գիւղայիները կ'աշխատին զայն փախցնել Մէկը՝ Սարիբէգ անունով այդ հոգը իր վրայ կ'առնէ: Սարիբէգ կը մտածէ ծանօթանալու ուսուցիչին հետ, հրաւիրել այգի մը զուարճանալու նպատակով և կերուխումէ յետոյ անոր հետ կոռուի բռնուիլ, զայն լաւ մը տփել, «Ես նրան ինչպէս քո կամքն է, մի լաւ կուտեցնեմ. իսկ նա այդ անպատութիւնը չի կարող տանել և գլուխ կառնէ կը գնայ. մենք էլ կազատվենք նրա ձեռքից»:

Չորրորդ արարուածին Սարիբէգ կը ծանօթանայ Տիգրանի հետ և խնճոյքի կը հրաւիրէ:

Հինգերորդ արարուածին Տիգրանն ու Սարիբէգը խումբ մը բարեկամներու հետ այգին կը զուարճանան: Յետոյ առանց կոռուի կը վերադառնան այգիէն ու կ'երթան Սարիբէգի տունը: Կոփւը այդտեղ կը պատահի. Սարիբէգ իր կնոջ հետ կոպտութեամբ կը վարուի, Տիգրան կը միջամտէ. Սարիբէգ կը պահանջէ որ Տիգրանը ետ վերցնէ. իր ուղղած վիրաւորական խօսքերը. Տիգրան չի վերցներ, այն ժամանակ Սարիբէգ կեղծ զայրոյթի մը մէջ խանչալը կը կոխէ ուսուցչին փորը:

Ահա ձեզի «Վաղաժամ մահը»: Խայտառակութիւնը կատարեալ դարձնելու համար կը մնայ որ ան փորձեն ներկայացընել...

ԶԱՒՔՆ